



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 28 ՆՈՅԵՄԵՐ, 2022

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 12

ՆԵՆԳ ԱՇԽԱՐՀԷՆ ՓՐԿՈՒԵԼՈՒ ԱՂՈԹՔ

Փրկէ վիս, Տէր,  
որովհետեւ Քեզի հաւատարիմ մէկը չմնաց,  
մարդոց մէջ վստահելի մէկը չմնաց:  
Իրարու սուտ կը խօսին,  
շողոքորթ լեզուով, կեղծաւոր սրտով:  
Տէր, փակէ բոլոր շողոքորթ բերանները,  
կտրէ մեծխօսիկ լեզուներն անոնց՝  
որոնք կ'ըսեն. «Մեր լեզուով պիտի յաղթենք,  
ո՞վ կրնայ փակել մեր բերանները»:  
«Բայց.– կ'ըսէ Տէրը.–  
աղքատին փառապանքին ու չքաւորին հեծութեան դիմաց՝  
հիմա պիտի ելլեմ,  
եւ վիրենք պիտի փրկեմ վիրենք նախապողներէն»:  
Տիրոջ խօսքերը մաքրամաքուր են,  
զուտ արծաթի պէս՝ կաւէ հալոցով եօթն անգամ վտուած:  
Դուն՝ որ խօսքդ կը պահես, Տէր,  
մեզ միշտ պահպանէ նման մարդոցմէ,  
որովհետեւ մեր շրջապատը ամբարիշտներով կը յորդի,  
եւ մարդոց մէջ անարդարները կը մեծարուին:

### ՆԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես'նեղերոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



**ՍԱՂՄՈՍ 12:1-8**

Այս Սաղմոսը Դաւիթի ժողովածուէն քաղուած մաս կը կազմէ այն խումբին, որ օգնութեան կանչ է որ կ'ընէ: Առաւել եւս, որքան կը պարզաճի այս Սաղմոսը մեր այսօրուան իրավիճակին, որուն մէջ կ'ապրինք: Այսօրուան համար գրուած ու ըսուած ըլլար: Սա կը նշանակէ, թէ որքան այժմեական է Աստուծոյ խօսքը Սաղմոսներու ճամբով, որ մեզի կը ներկայացուի: Անոր համար ալ Աստուծոյ խօսքը երէկ, այսօր նոյն է յաւիտեան է: Հոգ չէ թէ երբ է գրուած, բայց անպայման ըսելիք մը ունի, պարզամ մը ունի փոխանցելիք:

Դաւիթ ցառով կ'արտայայտուի, թէ այլեւս հաւաքարհիմ եւ վստահելի մարդ չմնաց: Առաջին իսկ առիթով Դաւիթ այդ հաւաքարմութիւնն ու վստահելիութիւնը կը դիպէ որպէս Աստուծոյ նկատմամբ: Որովհետեւ երբ մարդիկ իրարու նկատմամբ անվստահելի ու անհաւաքարհիմ են, որովհետեւ արդէն Աստուծոյ նկատմամբ անհաւաքարհիմ ու անվստահելի են: Այնպէս ինչպէս Առաքեալը պիտի ըսէ, եթէ զԱստուծոյ կը սիրես, ուրեմն ընկերդ ալ, նմանդ ալ պէտք է սիրես, այլապէս սուր խօսած կ'ըլլաս եթէ ըսես որ ես զԱստուծոյ կը սիրեմ, բայց իմ նմանս չեմ սիրեր: Այս խօսքը նաեւ կը յիշեցնէ մեզ Քրիստոսի այն խօսքին երբ կ'ըսէ նկարի առած վերջին ժամանակները, «Երբ մարդու Որդին գայ, հաւաքք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Այդ անհաւաքարմութիւնն ու անվստահելիութիւնը կ'արտայայտուի իրարու նկատմամբ սուր խօսելով, շողոքորթ լեզուով եւ կեղծաւոր սրտով: Այսօր ալ կը փառապինք յաճախ այս վիճակին, կամ մենք արդէն այս վիճակին մէջն ենք: Շողոքորթ լեզուն, այն լեզուն է որ կը խօսի այն ինչ որ լսողը կ'ուզէ լսել: Այսինքն ճշմարտութիւնը գիտնալով հանդերձ: Այնպէս ինչպէս Պօղոս Առաքեալ կը յիշեցնէ իր աշակերտին Տիմոթէոսին, «Ժամանակներ պիտի գան երբ մարդիկ զիրենք հաճոյացնող քարոզիչներ պիտի փնտռեն»: Իսկ կեղծաւոր սրտի պարագային կրկնակի սիրտ բացաբարութիւնն է, որ կը նշանակէ այսօր այսպէս միւս օրը մէկ այլ ուրիշ փեսակ: Կիրակի օրեր մէկ սիրտով, իսկ շաբաթուան մէջ մէկ այլ ուրիշ սրտով:

Ահա Դաւիթ օգնութեան կանչ կ'ընէ որ Աստուծոյ զինք փրկէ այս վիճակէն, որպէսզի նախ անոնց ձեռքը չիյնայ, իսկ երկրորդ անոնց նման չըլլայ: Ան նաեւ կը խնդրէ, որ Աստուծոյ փակէ անոնց բերանները եւ կտրէ անոնց մեծխօսիկ լեզուները, որովհետեւ անոնք ոչ թէ միայն շողոքորթ լեզուներ են, այլ նաեւ անբարտաւան ու հպարտ, երբ կ'արտայայտուին ըսելով. «Ո՛վ կրնայ մեր բերանները գոցել»:

Այնպէս կը կարծենք յաճախ, որ մեծ խօսող բերանները ունին այնպիսի իրաւունքը կարծէք որ ոչ ոք կրնայ լրեցնել զիրենք: Յաճախ նաեւ այդ երեւոյթին դիմաց կը յուսահարինք, մոռնալով սակայն որ եթէ անոնք իրաւունքը ունին խօսելու, եւ ոչ ոք կրնայ զիրենք լրեցնել, որպէս թէ, ապա որքան երբ Աստուծոյ Ինք խօսի, ո՛վ պիտի կրնայ զինք լրեցնել: Ահա Դաւիթ ապաւինելով Աստուծոյ իբրեւ պաշտպան ու ապաւեն, ինքզինքին կը յիշեցնէ, ինչպէս նաեւ ունկնդրին կամ կարդացողին ըսելով. «Բայց Տէրը աղքատին փառապանքին ու չքաւորին հեծութեան դիմաց պիտի ելլէ ու պիտի փրկէ զիրենք նախապողներէն»:

Ահա այս վստահութիւնը կու գայ անկէ, որ Տիրոջ խօսքերը նման չեն մարդու խօսքերուն: Մարդը կը խօսի, բայց Աստուծոյ պարագային այդ խօսքը ճշմարիտ է եւ գործի կը վերածուի: Մարդուն լեզուն սուրով լեցուն է, բայց Աստուծոյ խօսքին պարագային գուր արծաթի պէս եօթն անգամ աւելի գրուած ու մաքուր է եւ ճշմարիտ, անոր մէջ կեղծիք չկայ: Երրորդ, երբ Աստուծոյ խօսեցաւ, հաւաքարհիմ ու ճշմարիտ է իր փուստ խոստումին, ուրեմն պիտի կատարէ: Անոր համար մաքուր է, ճշմարիտ է, կեղծիք չկայ անոր մէջ: Ուրեմն կարելի է անոր վստահիլ ու չկասկածիլ: Որովհետեւ եթէ Աստուծոյ խոստացաւ ուրեմն Ան կը պահէ իր խոստումը, եւ այնպէս ինչպէս կը պահէ իր խոստումը, Դաւիթը կը խնդրէ որ մեզ ալ պահէ այդպիսի մարդոցմէ, որովհետեւ այդպիսի մարդոցմով կը յորդի ամբողջ շրջապատը, առաւել եւս այդպիսի մարդիկ ալ կը մեծարուին: Թող որ անոնք մեծարուին, եւ պիտի մեծարուին, որովհետեւ մարդիկ նաեւ այդ կ'ուզեն ունենալ, բայց Դաւիթ չի դադրիր Աստուծոյ անունը եւ Աստուծոյ խօսքը մեծարել: Այսօր ալ նոյն իրավիճակն է որ կը փրկէ, ինչ բան է որ կը մեծարենք, որո՞ւ է որ կը մեծարենք: